Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
հունիսի 4-ի N 631 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հնդկաստանի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության (այսուհետ՝ ծառայություն) ներկայացուցչի (այսուհետ՝ ներկայացուցիչ) նշանակման և գործունեության հետ կապված հարաբերությունները:

2. Հնդկաստանի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն արտահանվող գոմեշի մսի յուրաքանչյուր խմբաքանակի պատրաստման նկատմամբ հսկողություն է իրականացնում Հնդկաստանի Հանրապետությունում ծառայության ներկայացուցիչը:

3. Ներկայացուցչին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը:

4. Ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետություն արտահանվող գոմեշի մսի յուրաքանչյուր խմբաքանակի համար տեղում անմիջականորեն ապահովում է սպանդի ենթակա կենդանիների նախասպանդային անասնաբուժական զննման փաստաթղթերի և դրանց մսեղիքի հետսպանդային անասնաբուժասանիտարական փորձաքննության իրականացման վերաբերյալ փաստաթղթերի ու պատրաստի արտադրանքի վերաբերյալ ներկայացված փաստաթղթերի համապատասխանության ստուգումը և դրա մասին

տվյալ խմբաքանակի վերաբերյալ տնտեսավարող սուբյեկտին տալիս համապատասխան տեղեկանք:

5. Ներկայացուցիչը սույն կարգի 4-րդ կետում նշված տեղեկանքում կատարում է նաև նշումներ Հայաստանի Հանրապետություն արտահանվող գոմեշի մսի յուրաքանչյուր խմբաքանակն արտադրող կազմակերպության անվանման, հաշիվ-ապրանքագրի համարի, բեռնարկղերի (կոնտեյներների), Հնդկաստանի Հանրապետության իրավասու մարմնի կողմից տրված բեռի անվտանգությունը հավաստող ուղեկցող փաստաթղթերի հաշվառման տվյալների վերաբերյալ: Տեղեկանքը ներկայացուցիչն ստորագրում և կնքում է՝ նշելով տեղեկանքը տալու օրը, ամիսը, տարեթիվը և հերթական գրանցման համարը:

6. Տեղեկանքների հաշվառման համար ներկայացուցիչը վարում է գրանցամատյան, որում պետք է նշվեն տեղեկանքը տալու ամսաթիվը, ամիսը, տարեթիվը և հերթական գրանցման համարը:

7. Ներկայացուցիչը պետք է ունենա «Անասնաբուժություն» կամ «Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն» մասնագիտությամբ բարձրագույն կրթություն և տիրապետի անգլերենին:

8. Ներկայացուցչի հետ ծառայության պետը Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով կնքում է աշխատանքային պայմանագիր, որում նշվում է ներկայացուցչի լիազորությունների շրջանակը և վարձատրության չափն ու կարգը:

9. Ներկայացուցչի հետ կնքվող աշխատանքային պայմանագրի նախագիծը համաձայնեցվում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի և Հայաստանի Հանրապետության վարչապետի հետ:

10. Ներկայացուցիչն ունի իր պաշտոնի՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն անվանմամբ կնիք և ձևաթուղթ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԻ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ